ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԵԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Ազգատարածքային հակամարտությունների ուսումնասիրությունը ոչ միայն տեսական հետաքրքրություն, այլև կարևոր գործնական նշանակություն է ձեռք բերում այդ հողի վրա ծագած հակամարտությունների արդյունավետ կարգավորման գործում:

Դեպի պատերազմները տանող ամենավտանգավոր ճանապարհը ազգատարածքային հակամարտություններն են: Հաճախ ազգատարածքային հակամարտությունների հիմնահարցը նույնացվում է էթնոքաղաքական հակամարտությունների հիմնահարցի հետ և գժվարացնում այդ երկուսի շրջանակների սահմանազատման ու հակամարտությունների լուծման հարցը:

Ազգատարածքային հակամարտությունը հակամարտություն է երկու և ավելի ազգերի միջև, որի հիմքում ընկած են տարածքային պահանջատիրության հարցեր: Տարածքային վեճի տակ հասկանում ենք «վեճի պարզորոշ արտահայտված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկայի վերաբերյալ կայուն ձև և ձևավորված տարաձայնությունների գոյությունը, սահմանի կամ որոշակի տարածքի նկատմամբ գերիշխանության հարցի մասին նորմայի գոյությունն ու կիրառումը»[1]:

Ազգատարածքային հակամարտություններն առավել սուր բնույթ են ստանում, երբ վիճելի տարածքներն իրենց բնիկ բնակչությամբ են բռնակցվում հարևան պետությանը, գրանք էլ իրենց հերթին ավելի են սրվում, երբ վիճող կողմերի մեջ առկա են լինում կրոնական ու քաղաքակրթական տարբերություններ: Ազգատարածքային նման հակամարտությունների առաջացումը պայմանավորված է մի կողմից անցյալում մասնատված ազգերի առանձին հատվածների միավորման հետ, մյուս կողմից՝ գերիշխող պետությունների ներքին բաժանումների հետ, երբ, անտեսելով իրենց ենթակա ժողովուրդների իրավունքներն ու պատմական սահմանները արվում է այնպես, որ որևէ փոքր ազգ գերիշխող տերության ոչ մի մարզում մեծամասնություն չկազմի: Այս ճանապարհով ստեղծվում է էթնիկական խճանկար, գարերով ամրագրվում են խճողված սահմանները և գրեթե անլուծելի խնդիրների առաջ կանգնեցնում ազատության տենչացող ազգերին: Հատկապես սուր են ազգատարածքային այն հակամարտությունները, երբ նոր կազմավորված պետությունները գերիշխանություն են ձեռք բերում ազգային այնպիսի փոքրամասնությունների վրա, ո-

---

[1] П. М. Клименко, А. А. Порк. Территория и граница СССР. М., 1985, с. 231.

ոնք իրենց պատմական հայրենիքից պոկված մի հատվածում ապրում են հարևան պետության կազմում: Ահա այսպես են առաջացել Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի և Ջավախքի հիմնախնդիրները:

Դեռևս 1828 թ. Պարսկաստանից Ռուսաստանին անցած Անդրկովկասում կատարվեցին կայսրության շահերից բխող վարչատարածքային մի շարք բաժանումներ: Նշանակալից էր հատկապես 1840 թ. ապրիլի 10-ի օրենքը, որով ցարիզմը ստեղծեց Վիրահմերեթյան նահանգը և Կասպիական մարզը: Վիրահմերեթյանը բաժանվեց 11 գավառների՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Արխազիայի և Գուրիայի: Կասպիական մարզը՝ 6 գավառների՝ Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Թալիշի, Դերբենդի և Ղուբայի: 1849 թ. ստեղծվեց Երևանի նահանգը, որի կազմից դուրս թողնված Զանգեզուրը, Լոռին ու Շամշադինը մտցվեցին Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների, իսկ Ղարաբաղի գավառը՝ Կասպիական մարզի մեջ:

Ռուսական հեղափոխություններից հետո ահա այսպիսի խայտաբղետ վարչատարածքային բաժանումների ենթարկված, մասնատված ու ըզկված հայրենիքներ ժառանգեցին Անդրկովկասում իշխանության գլուխ անցած ազգայնական կուսակցությունները: Ինքնիշխան նոր պետությունների կազմավորման այս հորձանուտում էր, որ առաջ եկան ազգատարածքային հակամարտությունների հիմնախնդիրները, որոնցից ամենասուրը Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի և Ջավախքի խնդիրներն էին:

Հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղն ու շրջակա լայնածավալ Դաշտային Ղարաբաղը պատմական Հայաստանի անբաժան մասն են հանդիսացել և մշտապես բնակեցված են եղել հայերով: Ադրբեջանն այդ տարածքների նկատմամբ առաջին անգամ հավակնություն հանդես բերեց 1918 թ., երբ հայտնվեց որպես անկախ պետություն[2]: Չնայած Կովկասի ազերիները մինչ այդ չունեին ազգային պետություն, այնուամենայնիվ, դա չխանգարեց մուսաֆաթականներին ներկայացնել վիթխարի տարածքների՝ Բաքվից մինչև Բաթում, պահանջ: Անդրկովկասյան սեյմի մուսավաթական խմբակցության կողմից 1918 թ. մայիսին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հիման վրա հայտարարվեց Ադրբեջանական Հանրապետության կազմավորման մասին: Հանրահայտ փաստ է, որ այս նահանգները երբեք միասնական քաղաքական միավոր չեն եղել և նույնիսկ ընդհանուր անուն էլ չեն ունեցել: Այս պետության ծնունդը, թուլացած Ռուսաստանի տարածքում, բացատրվում է նրանով, որ այն համընկավ ռուսական հեղափոխության, Թուրքիայի, Գերմանիայի և միջազգային թուրքանպաստ այլ գործոնների, պանթուրքիզմի աճի և այն գաղավարախոսության հետ, որը Վիլսոնի, ապա նաև պետրոխորհրդի կողմից հռչակվեց որպես «ազգությունների ինքնորոշում»:

Մուսաֆաթականների այս պահանջները մերժվեցին Լեռնային Ղարաբաղում, որտեղ ամբողջ իշխանությունը գտնվում էր Լեռնային Ղարաբա-

---

[2] *Ա. Մանասյան. Ղարաբաղյան հակամարտությունը պատմաքաղաքական և իրավական տեսանկյուններից.– «Դրոշակ», 1998, N 3:*

ղի օրինականորեն ընտրված Հայոց ազգային խորհրդի ձեռքում, և Բաքվում՝ Բաքվի կոմունայի կողմից:

Մուսաֆաթականների այս դիրքորոշմանը չխանգարեց նաև այն հանգամանքը, որ ինքնակոչ ադրբեջանական հանրապետության կառավարությունն այդ պահին նույնիսկ ի վիճակի չէր մտնել Բաքու: Ազգերի լիգան նույնպես չճանաչեց Ադրբեջանի հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի հարցը մտցրեց Փարիզի խաղաղության համաժողովի օրակարգ[3]:

Այսպիսով, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Բաքվի կոմունայի միջև ծավալված այս տարաձայնությունները հենց սկզբից ընկալվեցին որպես հայերի և Արևելյան Անդրկովկասի թուրքերի միջև ծագած ազգատարածքային հակամարտություն:

Ահա այսպիսին էր Ադրբեջանի կարդավիճակը, երբ 1920 թ. ապրիլին Կարմիր բանակը մտավ Բաքու: Տապալված մուսաֆաթական կառավարության փոխարեն հիմնադրվեց Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունը: 1920 թ. հունիսի 27-ին Լենինին հղած հեռագրում Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը Արևելքի հեղափոխության հաջողությունների հարցը ճարպկորեն կապեց հայկական տարածքների հաշվին Ադրբեջանը ընդարձակելու նպատակի հետ: Նույն թվականի հուլիսի 13-ին և 15-ին Ադրբեջանի Կոմկուսի կենտրոնական կոմիտեի բյուրոն որոշում ընդունեց, որով Նախիջևանի շրջանը հռչակեց Ադրբեջանի անվիճելի մաս, իսկ Ղարաբաղն ու Զանգեզուրը պետք է միացվեն Ադրբեջանին[1]:

Խորհրդային Ռուսաստանն, այնուամենայնիվ, հաշվի նստելով 1918-1920 թթ. մուսաֆաթական Ադրբեջանի ինքնիշխանությունը չճանաչած համաշխարհային ընկերակցության կարծիքի հետ, չձեռնարկեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու գործը: 1920 թ. հուլիսի 7-ի ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի նիստում արձանագրվեց, որ այդ տարածքների ճակատագիրը կորոշվի Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ՝ խառը հանձնաժողովի միջոցով, որը կառաջնորդվի բնակչության էթնիկ կազմի կամքով[5]: Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Ռուսաստանը չէր ուզում վիճելի տարածքները դիջել նաև Հայաստանի դաշնակցական հանրապետությանը և հարցի լուծումը հետաձգվում էր անորոշ ժամանակով:

1920 թ. նոյեմբերի վերջին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ, Ադրբեջանի հեղկոմը հանգես եկավ հռչակագրով, որով հրաժարվում էր «վիճելի տարածքներից»: Այս կապակցությամբ «Պրավդա» թերթի 1920 թ. դեկտեմբերի 4-ի համարում Ստալինը գրում էր. «Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանը ինքնակամ հրաժարվեց վիճելի նահանգներից և հայտարարեց Զանգեզուրը, Նախիջևանը ու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին»[6]: Սակայն չու-

---

[3] "League of Nation", the Records of the First Assembly, Meetings of the Committees 11, Geneva, 1990, p. 174.

[4] К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918-1925. Документы и материалы, Баку, 1989, с. 57.

[5] *Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 41, ց. 163, գ. 78, թ. 11–12:*

[6] "Правда", 1920, *դեկտեմբերի 4.*

տով, 1921 թ. հունվարին Ադրբեջանի կառավարությունը դրժելով իր խոսքը, Լեռնային Ղարաբաղ է մտցնում «հատուկ նշանակության ջոկատ» և պահանջում, որ Հայաստանը մարզից ետ կանչի իր ներկայացուցչին:

1921 թ. մարտի 1-ին Ադրբեջանի արտակարգ լիազոր դեսպան Բեհբութ Շահթախտինսկին Անդրկովկասի սահմանային վեճերի մասին տեղեկանք է հղում Լենինին, որով Ադրբեջանի և Վրաստանի համար վիճելի շրջանների թվում նշում է նաև Ախալցխայի և Բորչալուի գավառները, իսկ Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի է համարում Ղազախի, Շարուրի, Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի շրջանները[7]:

Ակնհայտ միակողմանի այս փաստաթղթում Հայաստանի տարածք հանդիսացող և մեծ մասամբ հայերով բնակեցված Բորչալուի գավառը, որն ընկած է Հայաստանի և Վրաստանի միջև, վիճելի է համարվում ոչ թե հայերի ու վրացիների, կամ գոնե հայերի ու ադրբեջանցիների միջև, այլ Ադրբեջանի և Վրաստանի միջև: Հարավկովկասյան հանրապետությունների սահմանների կարգավորման նպատակով ստեղծված հանձնաժողովի նիստում Ա. Բեկզադյանը ընդգծում է, որ վիճելի համարվող Ախալքալաքի գավառում բնակչության 72 տոկոսը հայեր են, Լեռնային Ղարաբաղում 94, իսկ Լոռում միայն հայեր են, համենայն դեպս, այնտեղ վրացիներ չեն ապրում[8]: 1921 թ. հուլիսի 2–7-ը տեղի ունեցավ Կովկասյան բյուրոյի արտակարգ պլենումը: Թեև հանրաքվե անցկացնելու մի քանի տարբերակներ են առաջադրվում, բայց ոչ մեկը չի ընդունվում: Քվեարկությամբ նախ անցնում է ԼՂ-ն Հայաստանին միացնելու տարբերակը, սակայն հուլիսի 4-ի, լույս 5-ի գիշերը անսպասելի մի որոշում է ընդունվում, ըստ որի. «Հաշվի առնելով Ղարարաղի տնտեսական սերտ կապերը Ադրբեջանի հետ և համերաշխության ապահովումը մուսուլմանների և հայերի միջև, թողնել այն Ադրբեջանի կազմում, տալ լայն ավտոնոմ իրավունքներ»[9]:

Հիմնահարցի մասնագետները ենթադրում են, որ այս որոշումն ընդունվել է Ի. Ստալինի կամքով: Ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրելու, որ վճռական դերը, այնուամենայնիվ, կատարել է թուրքական գործոնը: Այսպես են ենթադրում նաև արևմտյան որոշ հետազոտողներ: Չնայած այս վերանայման պատճառները իրավաբանորեն այնքան էլ հասկանալի չեն, բայցևայնպես, ռուս-թուրքական հարաբերությունների զարգացումը հնարավոր է որոշակի դեր ուներ, քանի որ քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի առաջին ու մերձավոր դաշնակիցներից մեկն էր: Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի միացվելը Ադրբեջանին կարող էր լինել գիջում նոր թուրքական պետությանը, որը, ինչպես հույս ունեին խորհրդային ղեկավարները, պետք է կարևոր դեր խաղար Ասիայի ազգային հեղափոխական պայքարը գլխավորելու գործում[10]:

---

[7] С. В. Х а р м а н д а р я н. Ленин и становление Закавказкой Федерации. 1921-1923. Ереван, 1969, с. 97.

[8] Նույն տեղում, էջ 101:

[9] Նույն տեղում, էջ 104:

[10] C h. W a l k e r. Armenian. The Survival of a Nation. London, 1980.

Նույն՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում, մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների, մյուս կողմից քեմալական Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր[11], որը համապատասխանում էր նույն թվականի մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի[12] սկզբունքներին: Սրանով չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, իսկ Հայաստանին պատկանող տարածքների զգալի մասն անցավ Թուրքիային: Բացի այդ, վերջինիս պահանջով Նախիջևանի մարզը կազմեց ինքնավար հանրապետություն՝ Ադրբեջանի հովանավորության ներքո:

1921 թ. նոյեմբերի 6-ին Գ. Մգիվանին և Աս. Մռավյանը ստորագրեցին հայ-վրացական սահմանների համաձայնագիրը, որով Լոռին անցնում էր Հայաստանին, Ախալքալաքը՝ Վրաստանին:

1923 թ. հունիսի 7-ին, Կովկասյան բյուրոյի ճնշմամբ, Ադրբեջանը ստիպված եղավ ԼՂ ինքնավար մարզի կազմավորման մասին որոշում ընդունել: Խախտելով հանձնարարված տարբերակը, Ադրբեջանի կառավարող շրջանները ոչ թե Լեռնային Ղարաբաղը, այլ նրա մի մասը մտցրին ստեղծված ինքնավար մարզի մեջ: Մարզի սահմաններից դուրս մնացին Շամքորը, Գետաբեկը, Խանլարը, Շահումյանը, Քարվաճառը, Լաչինը, Հորադիզը: ԼՂԻՄ-ը մնաց անկլավային վիճակում, քանի որ «Կարմիր Քրդստան» ստեղծելու պատրվակով Արցախը անջրպետվեց Լաչինով:

Այս ամենի պատճառների մասին Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված իր ուշագրավ աշխատության մեջ ամերիկացի քաղաքագետ Պոլ Գոբլը գրում է. «Ստալինը միտումնավոր յուրաքանչյուր հանրապետության մեջ թողնում էր մեկ կամ երկու ազգային փոքրամասնություն, որը կախված լիներ Մոսկվայից, հովանավորության առումով, և այդպիսով հանդիսանար Մոսկվայի գործակալը տարածաշրջանում: Ավելին, ստեղծելով ասիմետրիկ ուժային հարաբերություններ, Ստալինը կարող էր էթնիկական հակասություններն ուղղել ոչ թե ռուսների դեմ և չեղել դրանք կենտրոնում տիրապետող ռուսական տարրից»[13]:

Գրեթե նույն նպատակներով ու մեթոդներով ձևավեցին ու վերաձևվեցին Հարավային Կովկասի մյուս ժողովուրդների պատմական հայրենիքներն ու պետական սահմանները: Այս պատճառով ծնվեցին վրաց-աբխազական, վրաց-օսական հակամարտությունները, Աջարիայի, Ջավախքի, Բորչալուի, լեզգիներով բնակեցված Ադրբեջանի հյուսիսարևելյան շրջանների, Նախիջևանի հակամարտությունները: Հատկապես գերլարված են վրաց-աբխազական և հայ-ադրբեջանական հակամարտությունները, որի մեջ ներքաշված է ողջ տարածաշրջանը: Ստալինն իրագործելով իր պլանները, առանձին միութենական հանրապետությունների կազմի մեջ մտցնելով հարևան ազգերի տարածքները, ստեղծեց Վրաստանի և Ադրբեջանի մինիկայսրությունները՝ կիրառելով ազգերի համաստորադասության մի քանի

---

[11] Հայաստանը և միջազգային դիվանագիտությունը սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). Երևան., 1972:

[12] Է. Զոհրաբյան. Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները. Երևան, 1979, էջ 196:

[13] Pol Coble. Coping with the Nagorni Karabakh Crisis, p. 20.

աստիճաններ, հետևաբար՝ հակասությունների ու թշնամանքի մի քանի մակարդակներ: Մոսկվան հարավկովկասյան տարածաշրջանում էթնիկական ու պետական սահմաններն այնպես գծեց, որ մշտապես առկա լինեն տարածաշրջանի երեք հիմնական ազգերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների հակամարտություններ, որոնց լուծման դատավորի դերը վերապահվում էր իրեն:

Կյանքը ցույց տվեց, որ խորհրդային ղեկավարների տեսական եզրահանգումները, սխալ գնահատականներն ու բացթողումները թանկ նստեցին թե իրենց, թե՝ Հարավային Կովկասի ժողովուրդների վրա: Հարավկովկասյան ազգատարածքային հակամարտություններն այդ ճանապարհով չլուծվեցին, այլ միայն ժամանակավորապես սառեցվեցին, որպեսզի նոր ուժով բռնկվեն պետական անարգարությունը շտկելու նպաստավոր պահին: Իսկ այդպիսի պահ ստեղծվեց ԽՍՀՄ-ի փլուզումով, և այդ փլուզման գլխավոր պատճառներից մեկն էլ հանդիսացավ հենց բազմազգ պետության վարած ազգային սխալ ու կամայական քաղաքականությունը:

К ВОПРОСУ О ВОЗНИКНОВЕНИИ ЮЖНОКАВКАЗСКИХ ПРОТИВОБОРСТВ

АРЕГ ГАРИБДЖАНЯН

Р е з ю м е

В 1921 – 1923 гг. территориальные споры между Закавказскими республиками фактически не были разрешены, они были лишь временно затушеваны. Впоследствии, через несколько десятилетий, они вновь возникли с новой силой, требуя справедливого решения.